ՄԻԽԱՅԻԼ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԳՈՐԲԱՉՈՎ

ՄԻԽԱՅԻԼ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԳՈՐԲԱՉՈՎ

Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովը ծնվել է 1931 թվականի մարտի 2-ին Ստավրոպոլի երկրամասի Կրասնոգվարդեյսկի շրջանի Պրիվոլնոյե գյուղում, գյուղացու ընտանիքում:

1941—1945 թվականների Հայրենական մեծ պատերազմից հետո նա 15 տարեկան հասակում սկսում է իր աշխատանքային գործունեությունը: Աշխատում է որպես մեքենատրակտորային կայանի մեխանիզատոր: 1952 թվականին ընդունվում է ՍՄԿԿ-ի անդամ: 1955 թվականին ավարտում է Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը (իրավաբանական ֆակուլտետը), իսկ 1967 թվականին՝ Ստավրոպոլի գյուղատնտեսական ինստիտուտը, ստանալով գիտական տնտեսագետ-գյուղատնտեսի մասնագիտություն:

1955 թվականից Մ. Ս. Գորբաչովը կոմերիտական և կուսակցական աշխատանքում է: Աշխատում է Ստավրոպոլի երկրամասում. որպես ՀամԼԿԵՄ Ստավրոպոլի քաղկոմի առաջին քարտուղար, կոմերիտմիության երկրկոմի պրոպագանդայի ու ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ, իսկ հետո որպես երկրորդ և առաջին քարտուղար:

1962 թվականի մարտին Մ. Ս. Գորբաչովը առաջ է քաշվում որպես Ստավրոպոլի տերիտորիալ արտադրական կոլտնտեսային-սովխոզային վարչության կուսկազմակերպիչ, իսկ այդ նույն տարվա դեկտեմբերին հաստատվում է որպես ՍՄԿԿ երկրկոմի կուսակցական մարմինների բաժնի վարիչ:

1966 թվականի սեպտեմբերին նա ընտրվում է կուսակցության Ստավրոպոլի քաղկոմի առաջին քարտուղար: 1968 թվականի օգոստոսից Մ. Ս. Գորբաչովը աշխատում է որպես ՍՄԿԿ Ստավրոպոլի երկրկոմի երկրորդ քարտուղար, իսկ 1970 թվականի ապրիլին ընտրվում է առաջին քարտուղար:

Մ. Ս. Գորբաչովը ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի անդամ է 1971 թվականից: Եղել է կուսակցության XXII, XXIV, XXV և XXVI համագումարների պատգամավոր: 1978 թվականին ընտրվում է ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղար, 1979 թվականին՝ ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու: 1980 թվականի հոկտեմբերին Մ. Ս. Գորբաչովը ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածուից փոխադրվում է քաղբյուրոյի անդամ: ՍՍՀՄ 8—11-րդ գումարումների Գերագույն սովետի դեպուտատ է, Միության սովետի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ: ՌՍՖՍՀ 10—11-րդ գումարումների Գերագույն սովետի դեպուտատ է:

Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովը կոմունիստական կուսակցության և սովետական պետության նշանավոր գործիչ է: Այն բոլոր պոստերում, որ նրան հանձնարարում է կուսակցությունը, նա աշխատում է իրեն հատուկ ձեռնեռեցությամբ, եռանդով և անձնվիրությամբ, իր գիտելիքները, հարուստ փորձը և կազմակերպչական տաղանդը նվիրաբերում կուսակցության քաղաքականության կենսագործմանը, անձնվիրաբար ծառայում է Լենինի մեծ գործին, աշխատավոր ժողովրդի շահերին:

Կոմունիստական կուսակցությանը և սովետական պետությանը մատուցած ծառայությունների համար Մ. Ս. Գորբաչովը պարգևատրված է Լենինի երեք շքանշանով, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով ու մեդալներով: